Հաստատում եմ՝
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
տնօրեն Վ. Ա. Տեր-Ղևոնդյան

ԿԱՐԾԻՔ

Հենրիկ Ալբերտի Խաչատրյանի «Հայաստանի վարչական կառուցվածքը, իրավական կարգավիճակն ու նախարարական համակարգը 387-630-ական թթ.» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության մասին

Հենրիկ Ալբերտի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսությունը՝ «Հայաստանի վարչական կառուցվածքը, իրավական կարգավիճակն ու նախարարական համակարգը 387-630-ական թթ.» վաղ միջնադարյան պատմության կարևորագույն թեմաներից է: Գովելի է, որ մեր օրերում ուսումնասիրվում և պաշտպանության է ներկայացվում այս թեմայով թեկնածուական ատենախոսություն, քանի որ այսօր արդեն իսկ զգալի է պատմագետ-միջնադարագետների խիստ պակաս:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, քարտեզից: Ներածությունում (էջ 3-15) ներկայացված է ուսումնասիրության արդիականությունը, նպատակն ու խնդիրները, սկզբնաղբյուրների ու գրականության տեսությունը, մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու գործնական-կիրառական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ «Հայաստանի վարչական կառուցվածքն ու իրավական կարգավիճակը (387-630-ական թթ.)» (էջ 16-86), ներառում է երկու ենթագլուխ, որոնցում ատենախոսն անդրադառնում է Մեծ Հայքի արևելյան և արևմտյան հատվածների վարչական կառուցվածքներին և իրավական կարգավիճակներին:

Երկրորդ գլուխը՝ «Հայաստանի նախարարական համակարգը (387-630-ական թթ.)» (էջ 87-126), բաղկացած է երեք ենթագլուխներից: Այս գլխում ատենախոսը անդրադարձել է նշված ժամանակաշրջանի Հայաստանի նախարարական համակարգերին, մարզպանական շրջանի այն բոլոր նախարարարական տոհմերի անունները ներկայացրել է աղյուսակի տեսքով՝ հիմնվելով պատմական սկզբնաղբյուրների վրա: Այնուհետ խոսել է կառավարական համակարգի մասին՝ մեկ առ մեկ շեշտադրելով այն բոլոր գործակալությունները, որոնք գործել են տվյալ ժամանակաշրջանում:

«Եզրակացություններ» բաժնում (էջ 127-130) ամփոփված են ուսումնասիրության արդյունքները:

Ատենախոսությանը կից ներկայացված է նաև «Մարզպանական Հայաստանը 428-451 թթ.» քաղաքական քարտեզ:

Հ. Ա. Խաչատրյանի ատենախոսության ակներև արժանիքներից է նրա օգտագործած սկզբնաղբյուրների և գրականության հարուստ ցանկը (էջ 131-148):

Գովելի է նաև, որ հեղինակը քննության է առել շուրջ երեքհարյուրամյա նման խրթին պատմական ժամանակաշրջանը, երբ Հայաստանը, բաժանված երկու մասի, ռազմական թատերաբեմ էր դարձել Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: Շեշտենք, սակայն, որ հեղինակը թյուրիմացաբար նշում է 591 թիվը որպես Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև Հայաստանի բաժանման թիվ (էջ 3), մինչդեռ այն տեղի էր ունեցել ավելի վաղ. 591 թ. Տեղի ունեցավ վերաբաժանում, որի արդյունքում Պարսկաստանին անցավ Հայաստանի զգալի մասը:

Մեր հիմնական դիտողություններն են. ատենախոսությունն ավելի նման է պատմական ակնարկի: Աշխատանքում ներկայացվում են իրադարձություններ, որոնց ինքնուրույն վերլուծությունը մակերեսային է: Բավարար չեն նաև գիտական նորույթի, նպատակի, արդիականության և եզրակացությունների ձևակերպումները:

Աշխատանքի «գիտական նշանակությունն ու արդիականությունը» բաժնում շատ հպանցիկ է ներկայացվում նորույթը, համոզիչ չէ թեմայի արդիականությունը, եթե հաշվի չառնենք միջնադարագիտությամբ զբաղվելու առավելությունները մեր օրերում: Յուրաքանչյուր միտք արտահայտելիս շեշտադրվում են այլ ուսումնասիրողների կամ սկզբնաղբյուրների տեսակետները, որոնց ստվերի ներքո են մնում արդեն հեղինակի ինքնուրույն եզրակացությունները կամ տեսակետները: Երբեմն էլ դրանք միայն արտահայտվում են որևէ մեկի կարծիքի հետ համաձայնությամբ կամ ժխտմամբ:

Ատենախոսությունը զերծ չէ որոշ մասնավոր թերություններից և անճշտություններից.

1. Սովորաբար գիտական աշխատանքում պատշաճ չէ զգացական բառերի արտահայտումը, ինչպես օրինակ՝ «պարսկա-բյուզանդական **նենգ** քաղաքականություն» (էջ 3): Միջպետական հարաբերությունները չի կարելի գնահատել միջմարդկային հարաբերությունների հայեցակետով, աշխարհընկալումով և կատեգորիաներով: Բնական է, որ որևէ երկրի քաղաքականություն միշտ բխել ու բխում է սեփական շահերից: Ուրիշների քաղաքականությունը գնահատելը մեր շահերի տեսանկյունից, ոչ միայն սխալ է ու հակագիտական, այլև վտանգավոր հենց մեզ համար: Թերևս ուրիշներին քննադատելու փոխարեն գնահատելի կլիներ, եթե մենք կարողանայինք ունակ լինել հակադրել մեր կողմից մշակված ճիշտ քաղաքականություն կամ տեսակետ:

2. Աղբյուրների և գրականության տեսության մեջ ատենախոսը թվարկում է աղբյուրներն ու ուսումնասիրությունները, սակայն առանց քննական մոտեցման:

3. Ատենախոսը աշխատանքում նշում է՝ «...շատ հետազոտողներ բաց են թողել հայոց պատմության 428-885 թթ. միջանկյալ ժամանակաշրջանը» (էջ 3) և թվում էր, թե հենց այդ շրջանն էլ պետք է արժանանար ատենախոսի ուշադրությանը: Ուստի ընտրված ժամանակաշրջանի (387-630-ական թթ.) հիմնավորումը այնքան էլ համոզիչ և սպառիչ չէ:

4. Թեմայի արդիականությունը հիմնավորելու համար «թուրք-աղրբեջանական կեղծարարությունը» (էջ 5) բավարար փաստարկ չէ: Այն, որպես այդպիսին, իջեցնում է ամեն մի գիտական ուսումնասիրության արժեք: Ինչպես խորհրդային տարիներին

ատենախոսության արդիականությունը պարտադիր հիմնավորվում էր «մարքսիզմի դասականներին» հղելով, հիմա էլ վատ այդ երևույթին փոխարինել է «թուրք-ադրբեջանական կեղծարարներին» պատասխանելու հիմնավորումը: Եթե աշխատությունը գիտականորեն, համոզիչ վերլուծում, ապացուցում է ինչ-որ խնդիր, ապա դա ինքնին պատասխան է նույն այդ հարցերում արված ու հնարավոր կեղծիքներին՝ կատարած լինեն դրան թուրքերն ու ադրբեջանցիները, եվրոպացիները թե ճապոնացիները:

5. Շարադրանքի կեսից ավելին նկարագրական է. տարբեր հետազոտողների կարծիքներն են այս կամ այն հարցի մասին, նրանց տեսակետներին հեղինակի համաձայնության կամ անհամաձայնության արձանագրմամբ: Սկզբնաղբյուրները ու դրանց հիման վրա ինքնուրույն վերլուծությունները շատ քիչ են եւ ակնհայտորեն երկրորդ պլանում են: Գիտական աշխատանքը առավելապես կշահեր, եթե կառուցված լիներ հակառակ համամասնությամբ՝ սկզբնաղբյուրների հետազոտման, սեփական վերլուծության հիման վրա իրողությունների վերհանումը, իսկ նույն հարցի մասին գիտական գրականության մեջ արդեն եղած կարծիքները տողատակում նշելը:

6. Արված 14 եզրակացությունների (էջ 127-130) մեծ մասում անգամ ոչ մի կերպ չի երևում, թե դրանք տվյալ հարցերից յուրաքանչյուրի դեպքում ի՞նչ են ավելացնում գիտության մեջ արդեն իսկ գոյություն ունեցող արդյունքներին կամ ինչ են փոխում դրանցում: Եզրակացություններից շատերը արդեն իսկ հայտնի ճշմարտություններ են, այլ կերպ ասած հստակ չէ ատենախոսության գիտական նորույթը:

7. Եզրակացություններում առկա են նաև մտքի ոչ ճիշտ ձևակերպումներ, ինչպես օրինակ՝ 9-րդ եզրակացությունում գրված մտքից՝ «VI դ. վերջերին հիշատակված Դավիթ Սահառունին պատմական անձ չէ...» կարելի է ենթադրել, որ Դավիթ Սահառունին մտացածին կերպար է: Այնուհետև շարունակում է, որ «...համանուն նախարարը եղել է ոչ թե Հայոց մարզպան, այլ՝ Հայոց իշխան 635-638/39թթ.»:

8. «**Հիմնավոր** ցույց է տրվել, որ...» (էջ 7) այս միտքը ինքնագնահատական է և գիտականորեն նույնպես կոռեկտ չէ:

9. Աշխատանքում տեղ են գտել տեխնիկական սխալներ, որոնք արտացոլված են նաև հղումների համակարգում. օրինակ՝ ամսագրերի, մատենագրական շարքերի անունները բոլորը ամենուրեք գրված են ընդարձակ տարբերակով, մինչդեռ պետք էր կիրառել ընդունված համառոտագրությունները՝ ՄՀ, ՊԲՀ և այլն:

10. Հանդիպում են մեկ-երկու ուղղագրական սխալներ (օրինակ՝ «գտնվեյին» -էջ 102), վրիպակներ (օրինակ՝ «դուրս բելելու» -էջ 102) և այլն:

11. Գրականության ցանկում «Կանոնագիրք հայոց»-ի էջերը նշելուց բաց է թողնված գրքի ներածության էջերի քանակը՝ LXXIX+743:

12. Ցանկալի կլիներ ավելի մանրամասն մեկնաբանություններ ներկայացվեր աշխատանքին կցված քարտեզի վերաբերյալ (թե՛ ատենախոսությունից, թե՛ սեղմագրից անհասկանալի է անգամ, թե ում կազմած քարտեզն է, թերևս կարելի է ենթադրել, որ այն կազմել է ատենախոսը):

13. Աշխատանքում օգտագործված է հարուստ գրականություն, սակայն պետք է նշել, որ նկատելի է այդ ահռելի գրականության և գիտական նորույթի անհամամասնությունը:
14. Ատենախոսը պետք է հիմնավորեր աշխատանքի նորույթն ու ընդգծեր իր կողմից կատարված նորովի մեկնաբանությունները և տարբերություններն այս և հարակից թեմաների շուրջ իրեն նախորդած ուսումնասիրողներից:

Ընդունված կարգի համաձայն՝ հարկ է նշել, որ Հենրիկ Ալբերտի Խաչատրյանի «Հայաստանի վարչական կառուցվածքը, իրավական կարգավիճակն ու նախարարական համակարգը 387-630-ական թթ.» թեկնածուական ատենախոսության բովանդակությունն արտացոլված է սեղմագրի մեջ, իսկ հեղինակի հրապարակած գիտական հոդվածները, համառոտ կամ ընդարձակ ձևով, ներկայացված են սույն աշխատության մեջ:

Որոշեցին. - Հենրիկ Ալբերտի Խաչատրյանի «Հայաստանի վարչական կառուցվածքը, իրավական կարգավիճակն ու նախարարական համակարգը 387-630-ական թթ.» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական աշխատանքներին ՀՀ ԲՈԿ-ի ներկայացրած պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատվել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի «Հին մատենագրական հուշարձանների և սկզբնաղբյուրների ուսումնասիրման» բաժնի 2021 թ. մայիսի 14-ի նիստում (արձանագրություն թիվ 3):

Նիստին մասնակցում էին. – պ.գ.դ., պրոֆ. Էռնա Մանյա Շիրինյանը (բաժնի վարիչ), պ.գ.թ. Աշոտ Սարգսյանը, պ.գ.թ. Ա. Մելքոնյանը, պ. գ. թ. Է. Սարիբեկյանը, պ. գ. թ. Ն. Վարդանյանը, պ. գ. թ. Գ. Հարությունյանը:

Արտահայտվեցին. –պ.գ.դ. Է. Մ. Շիրինյանը(բաժնի վարիչ), պ.գ.թ. Ա. Սարգսյանը, պ.գ.թ. Ա. Մելքոնյանը, պ. գ. թ. Է. Սարիբեկյանը, պ. գ. թ. Ն. Վարդանյանը, պ. գ. թ. Գ. Հարությունյանը:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի «5-14-րդ դարերի հայերեն ձեռագրերի ուսումնասիրման» բաժնի վարիչ՝պ.գ.դ., պրոֆ. Էռնա Մանյա Շիրինյան

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի «5-14-րդ դարերի հայերեն ձեռագրերի ուսումնասիրման» բաժնի վարիչ՝ պ.գ.դ., պրոֆ. Էռնա Մանյա Շիրինյանի ստորագրությունը հաստատում եմ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտնական քարտուղար՝ պ.գ.թ. Վ. Հ. Թորոսյան